

Արեւելեան

Պատրիարք

Արեւելեան ֆող կը հրատարակուի ամէն օր :

Տարեկան գինն է Պօլտոյ համար կանխիկ 1 Օսմանեան ոսկի . իսկ գաւառաց համար բութայի ծախքը մեր վրայ ըլլալով 7 արծաթ մէճիտ :

Մէկ օրինակը 10 փարայ է :

Մանուգմանց սողն ստալին անգամի համար 2 զրշ . երկրորդ անգամի համար 1 զրշ : և ուրիշ անգամներու համար մասնաւոր սակարկութիւն կը լինի :

Ար եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէն - Խմբագիրն կ. Պօլիս Քիւրքէի խանի վարի յարկ թիւ 26 Արեւելեան ֆողոյ տպագրատունը :

Ա. ՏԱՐԻ

1873 ՄԱՅԻՍ 15 ԵՐԵՎԱՆԻ

ԹԻԻ 21

Ա.ԶԳԱՅԻՆ

ՎԱՆԱՅ ԻՆԴԻՐ

ԿԱՄ

ՕՐԷՆՔ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Օրինաց ծագման սկզբնական շարժառիթը մարդկան ըստ կարողութեան և ըստ հաճոյից խառն 'ի խուռն գործոց չափաւորութիւնն է :

Օրէնքէն առաջ անգործ զօրաւորին, և իրաւասէր տկարն՝ հզօր անիրաւին ստացուածքն էր . քանզի իրաւունք կամ ճշմարտութիւն անգոյ էին . բայց օրինաց ծագումն մարդ մարդոյ վերայ տիրելու ունակութիւնը ջնջելով, զօրաւորն անզօրին հետ 'ի միասին օրինաց հպատակեցուց :

Օրէնք կազմակերպողը՝ իրաւունք և ճշմարտութիւնն է, իսկ գործածութեան նպատակն և վախճանը՝ օգտակարութիւն գործել :

Չը կրնար օրէնք ըսուիլ անոր (ըստ մեր ըմբռնման) որ մտրութիւն, չարութիւն և վնասակարութիւն գործարելու կազմութիւն ունի, զի մոլին չարն և վնասակարն բնութեամբ կը վանուին օրէնքէն, որոյ հիմունքը՝ իրաւունք և ճշմարտութիւն այսինքն օգտակարութիւնն է :

Մասնաւորապէս օրինաց գործարութեան եղանակները երկուք են : կարգապահական կամ գործարարական օրէնքը կարելի չէ մի և նոյն առարկայի համար միակերպ գործածութիւն ըմբռնել . քանզի չկրնար պատահիլ որ մի և նոյն առարկան մի և նոյն ժամանակի մէջ կարգապահական և պատ-

ժական օրինաց գործարութիւնն ընդունի : Չայն որ պատժել պէտք է, այլ եւս անիկէ կարգապահութիւն չի պահանջուիր . և ոչ պատիժ կրնայ տրուիլ անոր՝ ուսկից միայն կարգապահութիւն կը պահանջուի, օրինակի համար, մարդ չը ծեծելու արդիւական օրէնք կայ . Պօղոսը, օրինաց հակառակ Պետրոսը ծեծեց . այնուհետեւ Պօղոսը կարգապահական օրէնքէ ելնելով պատժականին տակ կը մտնէ :

կարգապահին օրէնք չկայ, Օրինազանցին օրէնքը պատիժն է :

Պէտք չէ կարծել թէ գառներուն յատուկ հեղինակուած օրէնք մը գայլերու համար ալ գործածական է, քանզի այն որ գառներուն օգտակարութիւն կը տրամադրէ, գայլոց համար վնասակարութիւն և պատժականութիւնն է :

Օրէնք, երբ իւր նախնական պարզ վիճակով օգտակարութիւն կը մտածուի, միայն և միշտ օգտակարութեան համար գործածական է . մեր սոյն ըմբռնած օրէնքը գործածելութեան կը դադրի՝ երբ վնասակարութեան պատճառ կը լինի :

Որովհետեւ՝ մի և նոյն օրէնքէն օգտակարութիւն և վնասակարութիւն չը յուսացուիր, և եթէ կայ այնպէս օրէնք մը, պատճառ՝ կամ իր կազմակերպութեան անկատարելութիւնն է և կամ ծուրութիւնը գործածութեան եղանակին մէջն է : Մակայն ինչ որ լինի, այնպիսին արժան է օրէնք անուանել :

Օրէնց բացարձակութիւն : Օրինական բացառութիւն մ'այն ժամանակ կը պատահի օրէնքին նախ՝ երբ փորձառու-

կան գործարութեան մէջ այնպէս կէտի մը կը հանդիպի, զոր առնել անհրաժեշտ օգտակարութիւն ունի, և թէպէտ այն օրինաց հրահանգէն դուրս ալ լինի, այս պարագայի մէջ օրէնքը չէ թէ օրինազանցութեան կը գործածուի, այլ փորձառական կատարելութիւններ կ'ստանայ . երկրորդ՝ երբ վնասակար ստիպումէն կը հարկադրի կամ բացառել օրէնքը և կամ վնասել զայն՝ որոյ օգտակարութեան համար միայն հեղինակուած է օրէնքը :

Մասնաւորութեամբ բացատրենք մեր ասացուածք սահմանադրական օրինաց Ս. Պատրիարքի և վանայ Պօղոս վարդապետի ներկայ յարարութեանց խնդրոյն վիճակով :

Երբեք չի

կը լսեմք թէ՛ Մայր եկեղեցւոյ դպրաց մէկ փոքր մասին յարուցած յուզմանց և ձեռնարկած գայթակղեցուցիչ միջոցներուն չկրնալով տանիլ Փէհլիվանեան Մեծ. Յովսէփէֆէնտի, որ դպրապետ էր, վերջապէս հաշիւները տուեր է, և կըսուի թէ՛ հրաժարելու ալ մտք ունի եղեր :

Այսպիսի դէպքեր լսելով՝ ոչ նուազ կը զարմանամք Մայր եկեղեցւոյ Թաղթորհրդոյն անտարբերութեան վերայ, որ կը թողու դպրաց յիշեալ խմբին իրեն գլխէն վեր դերեր խաղալու, որ պատիւ չբերէր ոչ խորհրդոյն և ոչ ալ եկեղեցւոյն կարգապահութեան : Եթէ կայ իրական այնպիսի պատճառ մի որ դպրաց այս անճոռնի ընթացքին տեղի կ'տայ, պէտք է կամ վերցուի այդ պատճառը և կամ իբր դպրական

սկզբունք հրատարակուի, իսկ եթէ
չկայ պատճառ մի և միայն այդ մի
քանի դպիրներէն կը ծնի յուզմունքը
ու երկպառակութիւնք, պէտք է ու-
ր ըմն այդ դպիրներն պատժել ու վերցը-
նել յուզմունքն ու երկպառակութիւնը
վերցուցած լինելու համար՝ յանուն ե-
կեղեցական իրաւանց և կարգապա-
հութեան :

Բարերգու և Երզնկայի առաջնորդ
Գեր Տ. Գրիգորիս Ծ. Կարգապետը շա-
բաթ օրը Բ. Դուռը կանչուելով, Բե-
ռիքի յանձնուեցաւ իրեն երրորդ
կարգի մէծիտիյէ պատուանշան մը,
որ ինչպէս յայտնի է՝ անցեալ տարի
իւր գոյքերուն հետ Բարերգի դէպ-
քին մէջ կորսուած ըլլալուն կրկին շը-
նորհուած է Օգոստ. կայսեր կողմանէ :

... Խմբագիր
Ասկէց առաջ Ասիա լրագրոյ միջո-
ցաւ Պեշիկ-Պէշի ստորագրութեամբ
նամակ մը հրատարակուեցաւ, որով
կը խնդրուէր Թաղ. Խորհրդէն որ Գե-
րապատի Խորհն Սրբազանի մասին
կազմուած ընդհանուր ժողովոյ ինչ-
պէս և քանի՞ անձամբ գումարուիլը
հրապարակաւ իմացնէ, (կըսուի թէ
Թաղ. Խորհուրդ քանի մը տպագրեալ
նամակներ միայն իր ուզած անձանց
խրկած է) մինչեւ ցարդ լուեց : Ասիոյ
խմբագիրն իր մայիս 9 թուականաւ
Թերթին մէջ կըսէ թէ « Պէշիկթաշի
ժողովուրդ իւր քարոզիչը թողուլ կամ
չթողուլը խնդիր ըրաւ և թաղեցւոյն
ընդհանուր կազմուած ընդհանուր ժո-
ղովով որոշեց և ըն. » . Թո՛ղ բարեհաճի
արդոյ մեծապատիւ խմբագիր (ինչ-
պէս որ ինք ստուգած է հարկաւ) հը-
տարակել թէ ո՞վ հրաւիրած է զթա-
ղեցիս ինչպէս և քանի՞ անձերէ կազ-
մուած է ընդհանուր ընդհանուր ժողով,
և խնդիրն ինչպէս հառաջարկուած և
որոշուած է, մեք Պէշիկթաշուց ար-
դարախոհ մասէն միշտ կը ընեմք թէ
Գերապատիւ Խորհն Սրբազան մեծ
գործեր տեսնելու արժանի մէկն ըլ-
լալով պէտք է մեր գաւառացի եղ-
բայրներն հովուէ, այն տեղեր բարե-
կարգէ և լուսաւորէ. որոնք աւելի
պէտք ունին, զի « ո՛չ է պիտոյ բժիշկ
ողջոց, այլ հիւանդաց » : Պէշիկթաշ-
ցիքս թաղ մը կառավարելու չափ ան-
կարող վիճակի մէջ չենք. Մեծապա-
տիւ Թաղ. Խորհուրդ ցարդ դպրոցի
եկեղեցոյ, և թաղի պէտքերն դժ-
գոհութիւն մը չյարուցանելով՝ անթե-
րի հոգայած է. իսկ քարոզի սիրա-

հարներ (Ասիոյ ընած ընդհանուր) թող
բաւականանան ուրիշ քարոզներով,
արդէն քարոզչութիւն Խորհն սրբազա-
նին վերայ մնալով առաջնորդութեան
երթալ ընդունելու էին. երբ այնպէս
ըլլար ինչ օգուտ կըլլար Պէշիկթաշ-
ցուց՝ այս ալ թող յուշնէ Ասիոյ մեծա-
պատիւ խմբագիրն :

... Խմբագիր, սոյնը Չեր ազ-
դօգուտ լրագրոյ միջոցաւ հրատարա-
կուելու շնորհակալ լինելով :
Մնամ Խորհն յարգանքով
Թաղեցի :

... Խմբագիր
Խնդրեմ հետեւեալ աղղը Չեր
պատուական լրագրոյն յառաջիկայ
թերթով հրատարակել բարեհաճիք :
Մնամք եւսյն :

Ա Չ Գ
Հ Ր Ա Ի Է Ր
Ի ՀԱՆՐԱՊԵՏ ԿՍԵՂ ԾԱՐԵՂԱՐՅՈՒ ԱՉԳԱՅԻՆ
ՀԻՒԱՆՊԱՆՈՅԻ

Ս. Փրկչի Հիւանդանոցի Հոգաբար-
ցութիւնս պատիւ ունի հրաւիրել ի
դիմաց 450 ի մօտ Հիւանդանոցի խեղճ
պատասպարելոց, բարեսէր ազգային-
ները ի սոյն հանդէս, որ ունի կատա-
րէլ յառաջիկայ հինգշաբթի ի 17 մա-
յիս Համբարձման տօնի օրն յազգային
Հիւանդանոցն, ուր Ամենապատիւ
Սրբազան Պատրիարք Հայրը ներկայ
գտնուելով հանդիսաւոր Ս. Պատարագ
պիտի մատուցանէ :

Յուսով է Հոգաբարձութիւնս որ
բարեսէր ազգայիւրք կը հաճին իրենց
այցելութեամբը մխիթարել Հիւանդա-
նոցի խեղճ պատասպարեալները :

Ի դիմաց Հոգաբարձ. Հիւանդանոցի
ԱՏԵՆԱԳՈՒՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Ա. ԽԻՒՆՅԵՆ Գ. ՉԱՐԻԱՐԵՆ
14 Մայիս 4873
Մեծ նոր խան թիւ 49

ԳԱՂԱՔԱԿԱՆ
Ազգային ժողովը Խորհրդարանի դի-
ւանատան և իւր յանձնաժողովոց դի-
ւանատանց նախագահներուն ընտրու-
թիւններն ըրաւ :
Պ. Պիւֆէ նորէն ընտրուեցաւ. Պ.
կուլար Ռընուս Տաղի և Վիթէթի հետ
փրի նախագահ անուանեցաւ : Կրնայ
ըսուիլ թէ այս նախագահութիւնը կըռ-
ւոյ նախագահութիւն մ'է :
Դիւանատանց նախագահներէն տաս-

ներեքը աջակողմեան կեդրոնի կուսակ-
ցութենէ և միայն երկուքը՝ ձախակող-
մեան կուսակցութենէ են :

Չարմանալու չէ այս ընտրութեանց
վրայ. ասոնք մեծամասնութեան մե-
քենայութեանց արդիւնք են, որ կու-
զէ Պ. Թիէրը և Հանրապետութիւնը
տապալել, և կը կարծէ թէ բոլորնա-
խագահութիւններն գրաւելով ասի-
կայ ընելու ձեռնհաս պիտի ըլլայ :

Քայց եթէ մեծամասնութիւնը խոչ
հրդարանին մէջ յանդիմանակելով, երկ
րի մը գլխաւորը բռնադատէ իշխանու-
թիւնը թողոյ, ըրածը պիտի կրնայ ի
գլուխ տանիլ, ո՞րչափ պիտի տեսէ իւր
շաղթութիւնը, բոլոր ըրածը այսչափ
պիտի ըլլայ :

Պրոկի, Շանկարնիէ, Խուլար, Կ.
սոնք ամէնքը եթէ միանգամ Խորհր-
դարանի մէջ տէր ըլլան, ազգին ալ
տէր պիտի կրնան ըլլալ :

Ասկից կը հետեւի թէ մեծամաս-
թիւնը ամէն բան կրնայ փորձել, կըր-
նայ երկրին գլխաւորը իշխանութենէ
ձգել, Խորհրդարանին մէջ միապետու-
թիւն հրատարակել և բանակին ձեռ-
քով այնպիսի կառավարութեան կերպ
մը ընդունել տալ ազգին՝ որ չուզեր :
Քայց սա ալ քիչ ստոյգ չէ թէ բոլոր
Գաղղիան զօրաց գնդերուն հետ խոթ
բալին Ազգային ժողովոյ գէ՛տ պիտի
յառնէ այն օրը, յորում Հանրապե-
տութեան նախագահը իշխանութենէ
իջնայ :

Ասկից զատ բան մը չի կրնար մը-
տածուիլ եթէ ընդհանուր բուհարկու-
թեան համար եղած ցոյցերը ի նկատի
առնուին :

Քուէարկութեան իրաւունքը կըր-
ցան զլսնալ զինուորաց, բայց այս ի-
րաւունքը անոնցմէ յափշտակելով այս-
պէս անիրաւարար անոնց զինուորական
պարտաւորութիւնը աւելի ծանրատաղ-
տուկ ընելով ինչ հանդերձ. չի կրցան
անոնց համոզումը յափշտակել : Այս
ժամուս զինուորք և քաղաքացիք մի
և նոյն մտածութիւնը և փափաքը ու-
նին, այն է՝ Ազգային ժողովոյն ջնջուի-
լը և Պ. Թիէրի հաստատուիլ տեսնել :

Աջակողմեան կեդրոնը կարողու-
թիւն ունի ամէն բան երազելու, ամէն
բանի համարձակելու. բայց այն օրը,
յորում պիտի կատարէ իւր հայրենա-
սիրութեան հակառակ վերջին յիմա-
րական գործը՝ զոր կը խորհի, արդի
Խորհրդարանին կորստեան վճիռը ստո-
րագրած պիտի ըլլայ :

Կալէսի իշխանին մեկնելուն վրայ,

որն որ վիճենայի Արոյ Եւտոս հանդիսին բացման ներկայ գտնուած և Հունգարիա ալ այցելութիւն մը ըրած էր, թէ թայի Լոյն լրագիրը հետեւեալ խորհրդածութիւնը կրնէ...

Կայլէսի իշխանը մեր մայրաքաղաքէն մեկնեցաւ սա հասնողուն ունեւալով անշուշտ թէ մեր երկրին ժողովուրդը Պիտ-Բէշթայի մէջ իւր ներկայութիւնը ողջունեց այն մտերմական համակրութեամբ որ բոլոր երկրին մէջ ունի Անգղիոյ ժողովուրդեան և արքայական գերդաստանին վրայ: Ինչ որ ամենէն հեռուոր ժողովուրդները մէկ մէկու կը միացնեն և կը մտնեցնեն, յարգանքը պահպանութիւնը և սահմանադրութեան հակամտութիւնը ըսել կուզեմք Անգղիական և Հունգարիական ազգաց մէջ այնպիսի բարեկամութիւն մը յառաջ կը բերեն, որուն մարդասիրական արդիւնքը վայելած եմք մեք մեր գծադրութեան օրերուն մէջ:

Մեք ողջունեցինք և պատուեցինք այս բարեկամ ազգին ազնուական ներկայացուցիչը այն գեղեցիկ կիրքերով զարդարուած իշխանը որ շատ առիթներու մէջ յայտնեց թէ լաւ կը ճանչայ հունգարական բնութիւնն և ոգին: մենք զինքը իբրև Անգղիոյ ապառնի վեհապետը պատուեցինք որուն երկրին վրայ մեր գաղթականք երկրորդ հայրենիք մը գտան: մենք զինքը պատուեցինք իբրև իշխան ներկայացուցիչ սահմանադրական միապետութեան ար մեր քաղաքական կենաց հիմնէ: Եւ այսօր որ կայլէսի իշխանը զմեզ կը թողնէ մեք շատ կը փափաքեմք որ իւր մեր մէջ ըրած սակաւ ժամանակեայ բնակութիւնը այս երկու ազգաց մէջ բարեկամական և յարգանաց զգացումները զօրացնելու նպատէ:

ՆԵՐՔԻՆ

Կայսերական հրամանաւ: Ծէրիդ Ահմէտ փաշայ ոստիկանութեան պաշտօնեայ: Պէլայի նախորդ կուսակալ Ապտիւլ Հատի փաշայ Այլինի կուսակալ: Հալէպի նախորդ կուսակալ Բերթէվ փաշայ Սանայի կուսակալ: Սանայի նախորդ կուսակալ Ալի փաշայ Հուտէ յոէի կուսակալ անուանեցան: Հալի նախորդ կուսակալ Մէհմէտ փաշայ թայիզի կուսակալ անուանելով և միւրի միւրանի աստիճան բարձրացաւ:

— Այս ուրբաթ օր վեհ. Սուլթանը իւր սովորական աղօթքը Տօւմայախչի մզկիթը ըրաւ: Ձինքը քննեւելու համար պատերազմի ձեւով շարուած զօրաց գունդը եզրիպական ձեւով փէս կը կրէր և նորաձեւ հանգերձ հագած էր: Այս գգեստին ձեւը վեհ. Սուլթանէն ընդունուած է և Պասիթիթի բաժնին նայելով նորին վեհափառութիւնը հրաման տուեր է որ բոլոր օսմանեան բանակին համազգեստին համար այն ձեւն ընդունուի:

— Փրանսուա Ժողէֆ կայսրը ինքնագիր նամակով մը վեհ. Սուլթանին ծանոյց կեղծել արչիդքուս հոյն Պաւիէրայի Լէօօլտ իշխանին հետ ամուսնանալը:

— Քանի մը օրէն Մեծ-Եպարքուսը իր Ենիգիւղի ամառուան ապարանքը պիտի երթայ:

— Կիմանանք կրտսէ Լա թիւրքի թէ վեհ. Սուլթանը պաշտօնէ դադարեալ Սաֆվէթ բաշային 15 հազար զէ կապեր է մինչեւ որ ուրիշ պաշտօնի մը հասնի:

— Եարաթ օր իննամիսէֆ զօրապետը Բ. Դուռը երթալով արտաքին գործոց պաշտօնեայ Բաշիտ բաշային հետ երկար ատեն բանակցեցաւ:

— Գապուլի բաշայ որ վիճենայի Օսմանեան դեսպան անուանեցաւ Աւստրո-Հունգարիոյ դեսպան Եուսուֆ կոմիին կոչուեց մը տուաւ երէկ ուր ներկայ էին նաեւ արտաքին գործոց պաշտօնեայն և իւր պաշտօնակիցներէն մէկ քանին:

— Խտիլին քեռին եղող Բարձր Հալիմ բաշայ և արտաքին գործոց պաշտօնեայ վսեմ Բաշիտ բաշայ Իմրիկէնի ապարանքը երթալով այցելութիւն տրւին այս հիգչարթի օր:

— Այս ուրբաթ օր ծովային գործոց պաշտօնեայն վեհ. Սուլթանին հետ տեսակցելու պատիւն ունեցաւ:

— Եարաթ օր արտաքին գործոց պաշտօնեայն Բերա Ենելով դեսպանաց այցելութիւն տուաւ նոյնպէս Թաքսիմ Գապուլի բաշային ապարանք գընաց իր առանձին խորհրդատան պաշտօնէին հետ:

— Կը հաւաստեն թէ կառավարութիւնը կանոնադրութիւն մը չիներ է որ անանուն ընկերութեանց վերաբերեալ օրէնքին մէջ փոփոխութիւններ կը մտցնէ:

Այս կանոնադրութեան նայելով բաղմաթիւ օրինական և պաշտօնական կարգերէ առաջ եկած ղ ժողովութիւնը որոնց եթարկուած էին այսպիսի ըն-

կերութեանց հիմնարկուք բողոքովին պիտի վերնան:

— Աւստրո-Հանգարիոյ դեսպանատան զինուորական մարդոցմէն կիւր Հէլ ասպետը ուրբաթ օր անկից մեկնեցաւ Տրապիզօն և Պաթնալ երթալու համար:

— Թրինաքիա ընկերութեան հոս գալիք շոգեհաւուն մեքեան արուեստով Բաշիմի առջեւ երկամե տնտած է որ հարկաւոր նորոգութիւններն ըլլան:

— Ասկից անալ ծովային գործոց պաշտօնեայ եղող Մամիք փաշայի որդւոյն Ճեմիլ փաշայի զինուորական անձանին տեղ միւրի միւրանի քաղաքական աստիճանը երրուեր է ուստի ճեմիլ փաշայ ալ ծովային խորհրդոյն անդամ ըլլալէ դադարած է:

— Եզիպտոսի Սօնիթէօր լրագիրը Հիւսէին Սապրի փաշային Եզիպտոսի ոստիկանութեան պաշտօնեայ անունը Դելը կը ծանուցանէ:

— Քասթամունիի կուսակալ Լ.Մին փաշայ ուրբաթ օր Աւստրիական շոգեհաւով մեկնեցաւ իւր պաշտօնատեղին երթալու համար:

— Թէաթիս լրագիրը կրտսէ Թէ հրուանկաւոր Բեթքս աւտոզիլը Սէլանիկի բանտերէն փախչելով նորէն Թրակիոյ մէջ երեւցեր է:

— Պաղատաի նորնախի կուսակալ Բեաիֆ փաշայ այս ուրբաթ քաղաքն հասաւ Թրիէստէի թղտատար շոգեհաւով:

— Այնէն նոր ընդունուած լուրերուն նայելով Պասիթիթ ըսել կուզէ թէ այս երկրին բնակիչներն որոշած են սաստիկ ընդդիմադրութիւն ընել Հուլանտայի պատրաստած յարձակման դէմ: Արդէն վաթսուն հազար մարդ կայ զէնքի տակ:

— Թունա լրագիրը կը ծանուցանէ թէ համաճարակ ախտը վիտինին մէջ երեւան ելլելէն ի վեր: ապրիլի 25էն մինչեւ 30ը վեց օրուան մէջ 17 հոգի բռնուելով անոնց 14ը միայն մեռան: Մայիս ամսուն սկիզբը անտը երթալով կը նուազէր և անկից ի վեր մէկը բռնուած չէ: Լոմի մէջ 25ըքէզ գաղթական մը գէշ տեսակէ եզիպտացորեան ուտելէն որովայնի լուծում ունեւալով լուր տարածուեցաւ թէ այս քաղաքին մէջ ալ ախտը երեւան ելած է: Բարեբաղդաբար այս ժամուս հիւանդութիւնը բողոքովին անհետ եղած է:

— Փիլիպուպոսոյ մէջ երկամիսեայ գործաւորք քաղաքին քով փոս մը բացած անտենին խիստ հետաքրքրական և ընտիր քանդակագործ հնութիւն

մը գտեր են : Ասիկայ կը ներկայացնէ ձիաւոր մը ձեռքը աղեղ բռնած և ետեւէն ալ շուն մը . իւր ձախ կողմը ծառի մը պլուած օձ մը կայ որ գլուխը ձիաւորին դարձուցած է :

Այս քանդակը մէկ մէթր երկայնութիւն և 48 հարիւրորդամեթր բարձրութիւն ունի և յոյն լեզուաւ արձանագրութիւն մը կը կրէ :

— Եգիպտոսի Մօնիթէօր լրագրին ըսածին նայելով այս օրերս մզկիթի մը շինութեանն համար կոտորուած քարի մը մէջէն խոշոր աղկեր ձուկի մը մեծութեամբ քարացած ձուկ մը գտնուելով ներքին գործոց պաշտօնէին խորհուրդ է, Եգիպտոսի հնութեանց թանգարանը դրուելու համար :

Անաթոլիքոս Ասթիւր լրագիրը հետեւեալը կը պատմէ :

— Անցեալ շաբթու մէջ երկու տաճիկներ՝ որք նաւակով մը տուն կը դառնային, ինքզինքնին ծովը նետելով խեղդուեր են : Դեռ այս դժբաղդներուն սոյն յուսահատական գործին պատճառները գիտցուած չեն :

— Պօսնայի օրագրին ըսածին նայելով կաննաւոր զօրաց կրթութեան համար այս դաւառին մէջ բանակներ հաստատուեր են : Պահեստի զինուորք մայիս 1 ին ժողուեր են իրենց գարնան կրթութիւններն ընելու համար ամսու մը չափ :

— Սիրիայի օրագիրը կը ծանուցանէ թէ Պաալպեքի մէջ քանի մը հոգի հիւանդ ոչխարի միս ուտելով փոխադրական հիւանդութենէ մը բռնուեր են . սակայն ձեռք առնուած նախապահեստ միջոցներու չնորհիւ անցտափ հետեւանք մը պատահած չէ :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վերնա 21 հայի

Բարիզի կայսրութեան վերջին անտիճանի կնճռոտութիւնը Գերմանական պօրաններու վրայ ազդեցութիւն կընէ :

Ծախել ուղղակի շատ կան :

Պերճիգայի թագաւորը հոս հասաւ :

Վերնա 24 հայի

Պորսային մէջ գինեքը նորէն ինկան Պերլինէն եկած դրամական անապահով լուրերուն վրայ : Սակայն դոցուած ատեն թեթեւ բարւոքում մը եղաւ :

Մօնիթէնկոյի իշխանը հոս հասաւ :

Գ Ա Ղ Ի Ա

Բարեւ 23 հայի

Ռուսիի արժէտումս Փր. 169. 25

Պ. Թիէր Ազգային ժողովոյն պատմամագիր մը խրկեց որուն մէջ կը ծանուցանէ թէ ըլլալիք վիճարանութեանց պիտի մասնակցի և թէ Պ. Տիւֆօրի հետ իրենց քաղաքական յայտարարութիւնը պիտի առաջադրեն : Պատմագիրը կը յաւելու նաեւ, Պ. Թիէր և իւր գահլծին անդամք ետ պիտի քաշուին երբ Խորհրդարանին առջեւ փոքր մաս մը կազմեն :

Պահպանողականներու շատ մը դումարումներ տեղի ունեցան :

Պ. Գազիմիր Բէրիէի բարեկամները բարեկարգութիւն պահպանելու համար երաշխաւորութիւններ կը պահանջեն իրմէ . և կուզեն որ զինուորական միջոցներ ձեռք առնուին :

Գահուն իրաւունքներն պաշտպանողք և պօնաբարդեանք նախագահութիւնը Օմալ դքսին տալու համար համաձայնած են : Եւ գաղանի կառավարութիւն մը կազմած են :

Բարեւ 24 հայի

Կը հաստատեն թէ պօրսայի մէջ բարւոքում մը կայ սա լրոյն վրայ թէ կառավարութիւնը իրեն ընդդիմադիր մասին դէմ յաղթութիւնը պիտի վաստկի :

Պ. Թիէր պահպանողական քաղաքականութիւնը պաշտպանելու համար երկար խօսեցաւ Ազգային ժողովոյն մէջ : Գահլծին մէջ պատահած երկպառակութեան վրայ ցաւ յայտնելով նոր օրինաց ոգին յայտնեց և կը կարծէ թէ Գազիման այդ օրէնքն ընդունելով պիտի կրնայ նոր դժբաղդութիւններէ ազատել :

Բարեւ 25 հայի

Ազգային ժողովոյն մէջ Պ. Գազիմիր Բէրիէի ատենաբանութիւն ընելէն վերջը Պ. Էրնուլ խօսեցաւ . և քուէարկութիւն մը առաջարկեց սա կերպով թէ, Ազգային ժողովը՝ պահպանողական քաղաքականութեամբ մը երկիրը հանդարտեցնելու պէտքը գիտնալով վերջին անգամուան եղած պաշտօնէական փոփոխութեանց վրայ կը ցաւի :

Պ. Տիւֆօր այն ատեն որք ելլելով ճշդիւ և պարզապէս օրուան խնդիր մը պահանջող առաջադրութեան դէմ կը խօսի : Ազգային ժողովը նախ Պ. Տիւֆօրի առաջարկութիւնը կը մերժէ և երկրորդ քուէարկութեամբ մը 344 քուի դէմ 360 քուէով Պ. Էրնուլի առաջադրութիւնն ընդունեց :

Այս քուէարկութենէ վերջը մեծ յուզմունք եղաւ :

Վերնա 25 հայի

Իւնիօն րէբիպլեքէն լրագիրը երկիրը ի հանդարտութիւն կը հրաւիրէ :

Ազգային ժողովոյն գիշերուան նիստին մէջ Պ. Տիւֆօր ծանոյց թէ պաշտօնեայք հրաժարեցան : Նոյնպէս Պ. Թիէրի մէկ պատգամագիրը ծանոյց թէ նա ալ հրաժարած է :

Պ. Պիւֆէ, Շանկարնիէ, տը Պ. րոկի և ուրիշներ կը պահանջեն որ ամիջապէս Պ. Թիէրի յաջորդին ընտրութիւն ըլլայ :

Չախակողմանք այս առաջարկութեան հակառակը կը պահանջեն աչա կողմեան կուսակցութեան անդամ դէմ պատասխանելով և Պ. Թիէրի հրաժարականը չնդունել կուսակցական Այս առաջադրութիւնը 339 քուէ դէմ 368 քուէով կը մերժուի :

Այս վայրկեանս յուզմունքը վերջ աստիճանի կը հասնի : Երբ լուծութիւնը կը տիրէ քուէարկութիւն կ'ընեն Նախագահութեան համար : այս քուէարկութենէն Մաք-Մահօն մարաջախտը 390 քուէ վատակելով Հասարակապետութեան Նախագահ կը հրատարակուի :

Այն ատեն Մաք-Մահօն որք ելնելով Նախագահութիւնն ընդունելով կը յայտնէ և կը հրաւիրէ գահլծին անդամները որ պաշտօնուն վրայ կենան : Նորընտիր Նախագահին ընտրութիւնը բարւոքում մը առաջ բերաւ դրամաշահին վրայ Գանի մը կեցոյթի անաղաղակներէ վերջը ամեն տեղ հանդարտութիւն կը տիրէ :

ԱՆԳՂԻԱ

Լնդրա 23 հայի

Կըստ լրագիրը կը հաւատէ թէ և յա դրամազեղչը հարիւրին 5 պիտի իջնէ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ս. Բէրսպոլս 8 հայի

Շահը երեկ եկած ատենը մեծ հանդիսիւ ընդունուեցաւ :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Արեւ 22 հայի

Խորհրդարանի նախագահութեան թեթեւութեան ընտրելին կորնթոսի երեսփոխան Պ. Յովհաննէս Տէլիեանին է :

ՏԻՐ ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

Կ.ԷՐՁԻՆԿԵԱՆԼԵԱՆ ԲԱՐՔՈՂ ՍՈՒՐ

ՏԳԱԳՐ. Յ. ԳԱՏԱՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Յ. ՊԱՐՈՆԵՍՅԱՆ

Կ Պօզիս Բիւրօի խան Վարի յարկ Թիւ 26